ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/98

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 20.11.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/98 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Վիցի Գրուպ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 20.11.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը՝

«Բերդի համայնքապետարան»-ի կողմից «Բերդի համայնքապետարան»-ի կարիքների համար բնական գազի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է թիվ «ՏՄԲՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/09» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցության նպատակով հայտ է ներկայացրել «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ն, ով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

14.11.2018թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության համաձայն՝ «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքին համապատասխանելու մասին հայտարարությունը համարվել է չհամապատասխանող, այն պատճառաբանությամբ, որ «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն 25 000 ՀՀ դրամի չափով:

19.11.2018թ. գնահատող հանձնաժողովը նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ի հայտը: Սակայն «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից մինչև ՊԵԿ-ի կողմից տեղեկատվություն տրամադրելը վճարվել է 50 000 ՀՀ դրամ դրոշմանիշային վճար /կցվում է վճարման հանձնարարականը/:

Առաջացած իրավիճակը հետևանք է նրա, որ «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ի 06.11.2018թ. դրությամբ հարկ վճարողի անձնական քարտի քաղվածքում պարտավորություններ չկան, դեռ ավելին՝ առկա է գերավճար:

Ընկերությունը ներկայացված բողոքով խնդրել է չեղարկել գնահատող հանձնաժողովի հայտը մերժելու մասին թիվ 3 արձանագրությունը:

«Վիցի Գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 23.11.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

2. Բերդի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Բերդի համայնքապետարանը, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 22.11.2018թ. գրությամբ հայտնել է, որ Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Բերդի համայնքապետարանի կողմից 2018թ. 4-րդ եռամսյակի վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՏՄԲՀ ԷԱՃ-ԱՊՁԲ-18/09» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ն 2-րդ չափաբաժնի մասով (բնական գազ) ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Բերդի համայնքապետարանը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում տրամադրված եզրակացության համաձայն՝ «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ի հայտարարությունը՝ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին, համարվել է իրականությանը չհամապատասխանող:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, սույն գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (06.11.2018թ.) հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություններ 25 000 ՀՀ դրամի չափով (կից տրամադրվում է Կոմիտեի կողմից տրված եզրակացության պատճենը), որը գերազանցում է Օրենքով թույլատրելի չափը 7996 ՀՀ դրամով, գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետով, 44-րդ կետով, հրավերի 7.17-րդ կետով, որոշեց մերժել «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ի հայտը և օրենքով սահմանված կարգով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով սույն ընթացակարգում առկա փաստական հանգամանքներով և վերը նշված իրավական նորմերով՝ մերժելով «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ի հայտը, կայացրել է իրավաչափ որոշում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 23.11.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/98 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲԽ-ԱՄ-2018/98 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Բերդի համայնքապետարանի կողմից Բերդի համայնքապետարանի կարիքների համար 2018թ. 4-րդ եռամսյակի վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՏՄԲՀ ԷԱՃ-ԱՊՁԲ-18/09» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով 06.11.2018թ. հայտ է ներկայացրել «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ն:

2. Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 09.11.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի 1.6-րդ ենթակետով կայացված որոշմամբ «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ն 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 20-րդ կետի հիման վրա 14.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 25 000 ՀՀ դրամի չափով:

4. Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 19.11.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով կայացված որոշմամբ «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ի 20.11.2018թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, Բերդի համայնքապետարանի 22.11.2018թ. գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) է ներկայացնում հարցում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվություն չստացվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը համարվում է այդ պահանջները բավարարող: Եթե կոմիտեի կողմից սույն կետով սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն .զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է, իսկ պայմանագիրը կնքված լինելու դեպքում կիրառվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները: Եթե սահմանված ժամկետում կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց

պարտավորություններ, ապա հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Բերդի համայնքապետարանի կողմից Բերդի համայնքապետարանի կարիքների համար 2018թ. 4-րդ եռամսյակի վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՏՄԲՀ ԷԱՃ-ԱՊՁԲ-18/09» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով 06.11.2018թ. հայտ է ներկայացրել «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ն:

Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 09.11.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի 1.3-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերության առաջարկած ընդհանուր գինը կազմում է 1 700 499.99 ՀՀ դրամ

Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 09.11.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի 1.6-րդ ենթակետով կայացված որոշմամբ «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ն 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 09.11.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 20-րդ կետի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 14.11.2018թ. տրամադրված եզրակացության

համաձայն՝ «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 25 000 ՀՀ դրամի չափով:

Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 19.11.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով կայացված որոշմամբ «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է 06.11.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածք, որի համաձայն՝ Ընկերությունը 06.11.2018թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվություն չստացվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը համարվում է այդ պահանջները բավարարող: Եթե կոմիտեի կողմից սույն կետով սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն .զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող

ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է, իսկ պայմանագիրը կնքված լինելու դեպքում կիրառվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները: Եթե սահմանված ժամկետում կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Այսպիսով, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 14.11.2018թ. տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է, որ «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 25 000 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, որի չափը գերազանցում է Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը, որի հիման վրա էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 20-րդ կետով, մերժել է Ընկերության հայտը:

Միևնույն ժամանակ ուսումնասիրելով Ընկերության 06.11.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում եմ, որ քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը 06.11.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Ուստի, առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ, Ընկերությունը ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա

տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ, Ընկերությունը ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Միաժամանակ արձանագրում եմ, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նման փաստական հանգամանքներով կայացրել է ԳԲԽ-ԱՄ-2018/83 և ԳԲԽ-ԱՄ-2018/87 որոշումները, որոնց շրջանակներում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն գրությամբ հայտնել է, որ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ընկերությունները պարտավորությունները կատարելիս առաջնորդվել են բացառապես էլեկտրոնային համակարգի անձնական գրասենյակում անձնական հաշվի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն ընկերությունը ժամկետանց պարտավորություններ չի ունեցել, ինչպես նաև հաշվի առնելով դրոշմանիշային վճարների պարտավորությունները որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ համարելու վերաբերյալ հարկ վճարողի իրազեկված չլինելը, ուստի տվյալ պարագայում ժամկետանց հարկային պարտավորությունների հանգամանքը, գնումների գործընթացին մասնակցության առումով, չդիտարկել որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով ժամկետանց պարտավորություն:

Այսպիսով, վերը նշված հանգամանքը հաշվի առնելով գտնում եմ, որ «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Վիցի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 20.11.2018թ. ներկայացված բողոքը բավարարել՝ մասնավորապես՝

պարտավորեցնել «ՀՀ ՏՄԲՀ ԷԱՃ-ԱՊՁԲ-18/09» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 19.11.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավաձարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ